— Ստուած իմ, Ստուած իմ, արդեօք ինձի սպասեցին, կ'ըսէր խեղճ մայրը, բաժնուելուս վրայ օրշափ ատեն անցեր է. արդեօք զինքը պիտի կարենամ գտնել,, ։

Կը շարունակուի ։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Վոքլիւզի աղբիւրը [1] ։

Աշխարհիս երեսի տեղերուն մէջ՝ ոմանք նիւթական ու մասնաւոր աղուորութիւն անուն ունին, ոմանք ալ մեծ յիշատակի արժանի դէպքով մը անմահացեր են։ Վոքլիւզի աղբիւրը աս երկու յատկութիւնն ալ մէկտեղ ունի։ Աւինիոնէն ելլելով, Որկ գետոյն գեղանկար և ծաղկազարդ եզերքներէն քանի մը ժամ Համբայ ընելէն վերջը, դիմացդ նեղ ձոր մը կ'ելլէ որուն երկու կողմը ամայադէմ անմատչելի ժայռեր պատած են, և որոնց մէջ կը հոսին, կը փրփրան ու կ'ոստնուն առուին սրարշաւ ջրերը։ Աս հովիտը լեռան մը մէջ կեցած է որ անհեթեթ ժայռ մըն է և գրեթէ 113 ոտք բարձրութիւն ունի։

Աս ապալեր ապառաժին ստորոտը անձաւի մը դուռ կայ, որուն մթութիւնը անանկ ահաւոր է որ Հիշդ հին բանաստեղծից նկարագրած դժոխքին դրան կերպարանքը կու տայ։ Սակէ ջուր մը կը բղխի որ ոչ վտակ է և ոչ աղբիւր, այլ մէկ ամբողջ գետ մը կը ձևացընէ։ Այնպէս ուժով և սաստկութեամբ կը ցատքէ աս ջուրը որ անձաւին դիմացի ամբարտակի ձևով քարակոյտէն վեր կը բարձրանայ, ուսկից ահաւոր խոխոջանքով կը գլորի կ'իյնայ գահավէժ մէկ ժայռէն մէկալ ժայռը, ինչուան որ միանալով աւելի խորունկ տեղ մը՝ հանդարտ ու խաղաղ ընթացք մը կ'առնու, զորն որ լա Սորկ կը կոչեն։ Բայց երբ ամառուան տաքերը կը կոխեն, ու ամէն կողմի ջրերն ալ քիչ քիչ նուազած կ'ելլան, զգալի կերպով անձաւին ջուրն ալ վար կ'իջնայ. ան ատեն խորունկը կրնայ մոցուիլ շարժուն ժայռերուն վրայէն վար իջնելով. անկէ դիմացդ կ'ելլեն հաստատուն քայլ սահուն ափափայներ, և կը հանիս հետաքրքրական բիւրեղացմամբք լեցուն մթին քարանձաւի մը։

Սակերևոյթն այս քարանձաւիս, որ կրնայ նաև շտեմարան մը կոչուիլ, միջակ բարձրութենէն առնելով եօթը ութը ոտք տրամագիծ ունի։ Որշափ որ ջուրը ցածնայ, այնչափ աս մակերեւոյթն ալ կը նուազի. 1683ին գարնան ժամանակները այնպէս խորունկը իջան աս ջրերը, որ՝ի յիշատակ երկու արձանագրութիւն փորեցին, մէկը ջրին հարթութեամբ որ ան ատեն երեք կանգուն 4 ոտք ու կէս տրամագիծ ունէր, և մէկալն ընդունարանին ձախակողմը։ Մենէն աւելի բարձր ու ամենէն աւելի ցած եղած ժամանակին՝ տարբերութիւնը եղեր էր 66 ոտք։

Աս աղբիւրին գեղեցկութիւնը տեսնելու ժամանակը ամառնային տաքերուն չէ, վասն զի ան ատեն ջրերը ստորերկրեայ ջրանցքներէն դուրս ելլելով հանդարտ և լռիկ ձորամէջը կը թափին, այլ ձմեռը ջրերը կ'ուռին կը բարձրանան ու կը զեղուն բոլոր քարանձաւը, թումբէն ալ անդին կ'անցնին, և մեծ առատութեամբ մը ժայռերուն վրայէն կը գահավիժեն, փրփրացայտ ալիքներ հանելով կը խորտակին, և ամէն կողմէն ալեաց փրփուրներու հոսանք մը կը տեսնուի որ տեսակ տեսակ ձևեր կ'առնուն, գոյնզգոյն փայլումներ կ'ունենան, և օդուն մէջ արձագանգներ կ'արթնցընեն։ Աս ձորը նոյն խաղաղութեան մէջ չես տեսներ ինչ որ քանի մը ամիս առաջ զարմացեր էիր. ան ատեն խռովայոյզ և ահաւոր տեսարան մը կ'առնու։ Աս կատաղի հոսանքին բրունութիւնը ալիքները գլորտըկելու ատեն կարծես թէ իր անցիցը մէջ ամէն բան առնէ տանի պիտի. և սակայն ամէն տեսակ տունկեր որ ժայռերուն մէջ

1 Գղ. Vaucluse, որ Իտալերէն Val chiusa այսինքն փակեալ յոր անուանը աղաւաղութիւնն է, ինչպէս որ կը կոչէ զայն Ռեդրարքա։

Վոքլիւզի աղբիւրը. (**Vaucluse**)

բուսած են՝ կը դիմանան ասոր, և երբեմն երբեմն ջրին ընթացքը դէմ կերթան ու ցատկտուն ալիքները կը պատռեն։

Ասկից կուգայ այսչափ զարմանալի ջրոյ զանգուածը, որ առու մը կը ձևացընէ նոյն ժայռէն ելած ժամանակը, և այնպիսի երևելի վտակ մը որ ձորին տակ հասած ատենը՝ հաւարկելի ալ կ'ըլլայ։ Ո՞ւր են ստորերկրեայ ջրամբարքը որ զայս կը սնուցանեն։ Ի՞նչ ուժով աս ամբարանոցներուն ջրերը յատակին երեսը գահավէժ կ'իյնան։ Ինչուան հիմա աս բանս բնախօսք չեն կրցած մեկնելու։ Դրաբուզիս մը պատճառ չկրնար ըլլալ. վասն զի ջուրը ամենևին անախորժ համ մը չունի. հապա աղբերային ջրոյ պէս թանձր է և

օդուն պէս ջինջ ու փայլուն։ Իսկ այս ջրին օրէնքը այս է. քննուած է որ ձեան ժամանակ և կամ տարափներէն վերջը գրեթէ յանկարծական զեղում մը կը ստանայ որ ինչուան բոլորովին ձիւները չհալին, և անձրևները չդադրին՝ ա-ճումն ալ չդադրիր։ Շատ անգամ ա-սոր խորութիւնը ջանացին գիտնալ. ոմանք կ'ըսեն թէ ոչ երբէք կրցեր են չափել, իսկ ոմանք ալ թէ յիսուն կան-գուն գտուեր է խորութիւնը։ Ամ վեր-ջի կարծիքը ծուռ կ'երևնայ ամէն նշան-ներէն և թէ անդունդը անդադար քա-նի կ'երթայ նեղնալով, գնտաչափը ժայ-ռերուն մէջ կը խրի կը մնայ. և ասոր ապացոյցը ան է որ ամէն փորձերը զա-նազան հետևանքներ ունեցան։ Պիտ-նոց և Ճամբորդաց աս հռչակաւոր աղ-բիւրին վրայ տուած տեղեկութիւնքը մէկմէկու հետ բաղդատելով՝ ամէնքը աս կէտին վրայ միաբան են թէ ան-դունդին խորէն վեր ելլելով, անձաւին ջրերը խաղաղ են և երեսը ամենևին ալեաց փրփուր և պղպջալ չեն տեսներ։ Ամկէ կրնանք հետևցընել թէ ստորեր-կրեայ ջրոց ահագին զանգուածները ի-րենց բնական ծանրութեամբը Ճնշուե-լով և ուրիշ դուրս ելլելու անցք չունե-նալով, բայց եթէ Ալ ղբլիւզի անձաւը, դէպ 'ի հոն կ'ուղղեն իրենց միակերպ և հաստատուն ուժը, որ կ'աՃի ձեանց հալելովը և կամ անձրևաց առատու-թեամբը։ Յայտնի է որ ստորերկրեայ ջրոց զանգուածները երկրիս երեսը ե-կած ջրերն ալ կրնան ընդունիլ հազար ու մէկ պզտի ծակերէն, թէ և անով չհետևիր որ չկարենան ալ դուրս ելլել նոյն ծակերէն. բաւական է որ ջրերը շեղում ունենան և դէպ 'ի ներքին խո-րերը ուղղակի թափանցեն։ Ամէ որ պատՃառաբանութիւնս իրաւ է, խիստ հաւանական կ'երևնայ թէ Ալ ղբլիւզի աղբիւրը ուրիշ բան չէ բայց եթէ մեծ բնական արդեսեան ջրհոր մը։

Ալ ղբլիւզի աղբիւրը Պաղլիոյ հրա-շալեաց մէկն է, և արժանի է ան մեծ համբաւոյն որ ունի տեսարանին մեծա-գործութեամբը, և սակայն աս մոգա-կան զգացումը չէ միայն որ մարդուս սրտին ազդեցութիւն կ'ընէ, այլ ասոր հետ մեծ և անջնջելի յիշատակ մըն ալ կայ։

Ամ Ալ ղբլիւզի աղբիւրն այն չոր ցա-մաք հովտին մէջ, որուն խորին լռու-թիւնը երբեմն երբեմն որոտաձայն ջրերուն խոխոջանաց արձագանգովը կը խռովի, աս ձորուն մէջ որ ատենօք ա-ւելի անբնակ էր քան թէ այսօրուան օրս՝ Մեդրարքա իր գեղեցկագոյն քեր-դուածները գրեց։ Ամ իրաւցընէ հռչա-կաւոր իտալացի քերդողը ստէպ այցե-լութեան կ'ելլար այս աղբիւրին՝ իր պա-տանեկութեան առաջին տարիները, ի-րեն սրտին վրայ մեծ ազդեցութիւն ը-նելով աս վայրենացեալ տեղը։ Ամոր նման հանՃար մը օդերևոյթի պէս պէտք էր որ փայլեր ԺԴ դարուն մութ սկիզբ-ները։ Ամրքայք արքայազունք մէկմէ-կէ աւելի անոր տեսութեանը կը փա-փաքէին. ինքն ալ անոնց փափաքանացը սիրով կը զիջանէր, բայց արքունեաց մէջ սակաւօրեայ կենցաղավարութե-նէն ետև կը դիմէր Ալ ղբլիւզ իր ա-ռանձնակեցութեան, և շուտ մը նոր գործ մը՝ իրեն մտաց հրաշալի գործու-նէութեամբը և զօրաւոր հանՃարովը կը ծնանէր։ Իր թղթերուն մէջ շատ կը խօսի իր այս սիրելի աղբիւրին վրայ, և թէ ինչ ախորժելի կեանք հոն կ'ան-ցընէր։ Ամ մեծ քերդողը թէպէտև շատ քերդուած ու գրուածք ալ հանեց, բայց իր համբաւը իր քնարերգութիւն-ներովը պիտի ստանար։ Ամյս նուագ-ներուն ու տաղերուն՝ մեծագոյն մասը նուիրած է Մեդրարքա 'ի գովեստ և 'ի յիշատակ Ամաւրա կամ Ամ՝ օր գաղղիացի տիկնոջը՝ զոր այս աղբիւրին մօտերը Ճանչցեր ու տարփացեր էր, և այնպէս սաստիկ՝ որ ժամանակը բաւական չե-ղաւ իր սրտին այս ապօրինաւոր կրակը մարելու, մինչև որ մահն եկաւ ու տա-ռաւ զ Ամաւրա՝ անոր անխոսխտելի պար-կեշտութիւնը պսակելու, և զ Մեդրարքա յանմխիթար սուգ ընկղմելով՝ առ Ճշշ-

1 Իտ. Sonetti. Canzoni.

մարիտ սէրն դարձընելու առ Ն՛ստուած, աշխարհիս ունայնութիւնը ցուցանելով իրեն։ Ա՛ենք քերթողին այս ետքի զգացմամբք գրած նուագներէն չորս մը հոս ճիշդ թարգմանենք, 'ի բաց թողլով առջի կրակով գրածները, որոնց մէջ որչափ ալ ճարտար, փափուկ ու ներդաշնակ ալ երևնայ, ընդհանրապէս խօսելով, բայց ետքէն ինքն իսկ կը վկայէր թէ

Ցաճախ ինքնին իսկ ամաչեմ ես զանձնէս,
Եւ զառանցմանս շառագունանքն են պըտուղ,
Եւ ապաշաւ, եւ ճանաչել յայտնապէս՝
Թէ որ հաճոյն յաշխարհի՝ է երազ սուղ։

Լաւրա յերկինս

Զուարթունքն ընտիր, 'ւ ոգիքն համայն երանեալ
Քաղաքացիքն երկնի, նախկին յայն աւուր
Ցորում Տիկինն անց, պար առին ընդհանուր,
Ի հիացումն անդ եւ զորով առլցեալ։
« Զինչ է այս լոյս, զինչ այս գեղ նո՛րօրինակ, —
Հարցանէին. — զի այպան վեհ պատմուճան՝
Մոլորականս յերկրէ յայս բարձր օթեւան
Ոչ ամբարձաւ երբէք ի սոյն ժամանակ »։
Իսկ ինքըն զոհ ընդ փոփոխել զբնակութիւնս,
Զանձն ընդ յաւէտ կատարելոցըն կըշռէ,
Եւ զընայ, մերթ ընդ մերթ դարձեալ ի թիկունս,
Դիտել թէ զամ ես զյետ, եւ թուի զի սպասէ.
Վասն որոյ զիրձս եւ զմիտ յերկինս անդ ուղղեմ,
Զի լսեմ զաղերս նորա զի զյետ փութայցեմ։

Տեսիլ

Խորհուրդքս ի վայրն զիս համբարձին օդաչու
Ուր կայր զոր ես խընդրեմս եւ ոչ զըտանեմ.
Անդ ի մէջ այնց՝ երրորդ երկինք զորս փակեն՝
Գեղեցկագոյն ըզնա տեսի եւ աղու։
« Ի սոյն սահման, ասէ կալեալ զիմս աջոյ,
Ընդ իս լիցիս դեռ, տենչ թէ ոչ սըխալի.
Ես նոյն եմ այն որ ետ քեզ մարտս այնքանի,
Եւ զտիւ լըցի մինչչեւ հասեալ յերեկոյ։
Միտք մահացու զիմ ըզբաստ ոչ իմանայ.
Քեզ լոկ ես մնամ, եւ ում սիրեր անձկայրեաց
Սիրուն քոյոյս՝ որ անդանօր անկեալ կայ »։
Ա՛հ, եւ ընդէ՞ր լըռեալ, եւ զձեռն ամփոփեաց.
Զի 'ձայն խօսիցս այս ըզգաստից եւ հեշտին
Փոքըր միւս եւս եւ մընայի ես յերկին։

Խոնարհութիւն առաջի Աստուծոյ

Արտօսր յանցեալ իմ արկանեմ ժամանակս,
Զորս ես ի խնամս արկի իրաց մարդկային.
Եւ ոչ ի թիւս ելի՝ մինչ թեւք ինձ զոյին
Տալոյ զանձնէս ոչ անաւագ օրինակս։
Դու որ զդըժնեայ դիտես զիմ մեղս եւ զմոլին,
Աներեւոյթ, անմահ երկնից թագաւոր,
Օգնեա հոգւոյս իմ թիւրացեալ եւ անզօր,
Եւ ի շնորհաց անդ քոց լցո զու զթերին,